Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

Սեմինար-քննարկում

Հայաստանի Հանրապետության սահմանների խնդիրն ըստ միջազգային իրավունքի

Արա Պապյան
Modus Vivendi հասարակագիտական
ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար

Ցանկացած պետության սահմանների խնդիրը սկսվում է վերջինիս անկախության հռչակումից: Հայտնի է, որ 1918թ. Հայաստանը Անդրկովկասի մյուս երկու երկրների հետ հռչակում է իր անկախությունը, որը, սակայն, Մեծ տերությունների կողմից ճանաչվում է ավելի ուշ: Հետաքրքիրն այն է, որ եթե Մեծ եռյակի երկրները հավասարապես ճանաչում են անդրկովկասյան բոլոր երեք հանրապետությունների անկախությունը, ապա Միացյալ Նահանգները ճանաչում է միայն Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ անտեսելով Վրաստանին ու Ադրբեջանին եւ պատճառաբանելով վերջինիս ոտնձգությունները Հայաստանի նկատմամբ: Ինչեւէ, 1919թ. հունվարից Փարիզի վեհաժողովը սկսում է իր աշխատանքները՝ քննելով պարտված երկրների՝ բնականաբար նաեւ Օսմանյան կայսրության ճակատագրերը: Վեհաժողովի հիմնական դերակատար երկրները չորսն էին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Իտալիա եւ Մեծ Բրիտանիա, ընդ որում դրանցից առաջինը ներկայացված էր նախագահի, իսկ մնացած երեքը՝ վարչապետի մակարդակով: Մեծ քառյակ կազմող հենց այս չորսը երկրներն էլ քննարկում էին իրենց անվտանգությանը վերաբերող մի շարք խնդիրներ, որոնց թվում առաջնայինը Գերմանիայի ճակատագրի հարցն էր, որն էլ հետագայում իր տրամաբանական հանգուցալուծումն է ստանում հայտնի Վերսալի հաշտության պայմանագրի ստորագրմամբ: Հաջորդիվ հաշտության պայմանագիր է կնքվում նաեւ Ավստրո-Հունգարիայի հետ, իսկ արդեն 1920թ. հունվարից սկսվում է քննարկվել Օսմանյան կայսրության, հետեւաբար նաեւ Հայաստանի հարցը:

Բայց մինչ այդ՝ արդեն 1919թ. փետրվարից Փարիզում իրենց աշխատանքն էին ծավալել հայկական երկու՝ Հայաստանի Հանրապետության եւ Ազգային՝ արեւմտահայոց պատվիրակություններ՝ համապատասխանաբար Ավետիս Ահարոնյանի եւ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, որոնք, սակայն, շատ հարցերում միասնական մոտեցում էին ցուցաբերում եւ միասնաբար ստորագրում մի շարք փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին հասցեագրված նամակ-փաստաթուղթը, որի տակ միաժամանակ առկա են հայկական երկու պատվիրակությունների ղեկավարների ստորագրությունները: Արդեն 1919թ. մարտից շրջանառության մեջ էր դրվել Միասնական Հայաստանի գաղափարը: Նորաստեղծ պետությունների հիմնական խնդիրը, բնականաբար, սահմանների հարցն է: Հայաստանի Հանրապետության դեպքում նկատի ունենք երեք հիմնական սահման Վրաստանի, Ադրբեջանի եւ Օսմանյան կայսության հետ: Այս համատեքստում Փարիզի վեհաժողովը քննության է առնում Հայաստանի սահմանների հարցը Վրաստանի եւ Ադրբեջանի հետ՝ նկատի ունենալով հստակ ամրագրված հետեւյալ սկզբունքը՝ Ցարական Ռուսաստանի ներքին, ներվարչական սահմանները չեն կարող հանդիսանալ որպես միջազգային սահմաններ կամ՝ հիմք նման սահմանների: 1920թ. փետրվարի 24-ին խնդրով զբաղվող հանձնաժողովը հրապարակում է «Ձեկույց եւ առաջարկներ Հայաստանի Հանրապետության սահմանների հստակեցման վերաբերյալ», որի տակ ստորագրում են Ազգերի լիգայի

խորհրդի անդամ երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան եւ Ճապոնիան: Փաստաթղթում խոսվում էր Հայաստանի հյուսիսային եւ արեւելյան սահմանների մասին, այսինքն՝ Վրաստանի եւ Ադրբեջանի հետ ունեցած սահմանների: Ուշագրավ է, որ նշյալ փաստաթղթում որպես սահմանների բաժանման հիմնական սկզբունք ընդունվում է ազգագրական պատկերը: Վերջինս ենթադրում էր, որ բոլոր հայաբնակ վայրերը մտնելու էին Հայաստանի նորաստեղծ հանրապետության կազմի մեջ՝ ներառելով Ջավախքը՝ Վրաստանից եւ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանից: Իհարկե, Հայաստանի տարածքում եւս կային ադրբեջանաբնակ շրջաններ, սակայն, ենթադրվում էր, որ նմանատիպ հարցերը կարող էին հեշտությամբ կարգավորվել փոխադարձ բանակցությունների միջոցով: Այսպիսով՝ 1920թ. փետրվարի 24-ին Ազգերի լիգայի խորհուրդը անդրկովկասյան հանրապետությունների տարածքային խնդիրներին մոտենում էր սահմանազատման ազգագրական սկզբունքի տեսանկյունից: Ի միջի այլոց, սա ամրագրվում է նաեւ Սեւրի պայմանագրի 92-րդ հոդվածում առ այն, որ տարածքային խնդիրները պետք է կարգավորվեն փոխադարձ համաձայնությամբ, հակառակ դեպքում դաշնակիցները, որոնք այսօրվա եզրաբանությամբ համապատասխանում են միջնորդների կարգավիճակին, որպես իրավարարներ, իրավունք էին ստանում գծելու սահմանները՝ հաշվի առնելով նաեւ վերոնշյալ սկզբունքը:

Եվ, ուրեմն, որո՞նք էին Հայաստանի սահմաններն ըստ նախնական պատկերի: 1919թ. հունիսին ամերիկացիներն առաջարկում են Մեծ Հայաստանի ծրագիրը, որն, ի միջի այլոց, կապ չունի Դաշնակցության ծրագրերի հետ եւ վերնագիրն էլ գալիս է Աստվածաշնչյան մարգարեություններից: Նշենք, որ այդ ժամանակ Դաշնակցությունը կամ Հայաստանի կառավարությունը հանդես էր գալիս շատ համեստ ծրագրերով, սահմանագծման նախնական տեսակետներով՝ հենվելով Ռուսահայաստանի վրա. Արեւմտյան Հայաստանի ճակատագիրը պետք է լուծեին արեւմտահայերը: Հետո միայն՝ 1919թ. մայիսին առաջ է քաշվում «Միացյալ Հայաստանի» գաղափարն ու համապատասխան ակտն այդ մասին, եւ Հայաստանի Հանրապետությունը ճանաչվում է որպես ամբողջ հայության ներկայացուցիչ՝ ելնելով հետեւյալ երկու ակտերից՝ ներպետական, այն է՝ 1919թ. մայիսի 28-ի «Անկախ եւ միացյալ Հայաստանի մասին» հռչակագիրը, եւ միջազգային, այն է՝ Սեւրի պայմանագիրը: Սա կարեւոր է, քանի որ այսօր էլ Հայաստանի ներկայիս Հանրապետությունը՝ որպես պետություն, ինքն է հանդիսանում համայն հայության պահանջների իրավատերը եւ ներկայացուցիչը: Այսպիսով՝ ամերիկյան ծրագրում ներառված էր ամբողջ Ռուսահայաստանը կամ ռուսական կայսրության հայաբնակ տարածքները՝ գումարած հայկական վեց վիլայեթները, Տրապիզոնը եւ Բիթլիսը, այսինքն՝ պատմական Հայաստանի տարածքները: Այստեղ շատ հետաքրքիր է ամերիկյան մոտեցումը Վիլսոնի պաշտպանած ազգերի ինքնորոշման սկզբունքի վերաբերյալ, քանզի դաշնակից երկրներն ակնարկում էին, որ նշյալ տարածքները Հայաստանին հանձնելով վերոհիշյալ սկզբունքն ակամա խախտվում է, քանզի հայերն այնտեղ մեծամասնություն չեն կազմում: Ամերիկյան պատասխանը, որը զետեղված է նաեւ պաշտոնապես հրատարակված փաստաթղթերում, փաստում է, որ հայերի պարագայում պետք է արվի բացառություն, եւ որ պետք է անպայմանորեն հաշվի առնվի 1890-ականներին նախորդող ժամանակաշրջանը, որովհետեւ 1890-ականներից հետո տեղ են գտել հանցագործություններ, ազգային զտումներ, կոտորածներ, ջարդեր, աքսորներ, իսկ միջազգայիյն իրավունքը հստակ մոտեցում ունի առ այն, որ հանցագործությունը չի կարող ծնել (նոր) իրավունք: Այսինքն՝ թուրքերը պարզապես չեն կարող ժխտել անհերքելի փաստերը՝ ելնելով այն իրողությունից, որ այսօր հայեր չեն ապրում նշյալ տարածքներում կամ այդ ժամանակամիջոցում տեղում կազմել են փոքրամասնություն, քանզի տեղի ժողովրդագրական պատկերը փոխվել եւ հայերը փոքրամասնություն են դարձել հանցագործության պատճառով եւ դրա արդյունքում: Նույնը վերաբերում է նաեւ հայ-

վրացական եւ հայ-ադրբեջանական սահմաններին, այսինքն՝ ելակետը նույն 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգագրական պատկերն է, ոչ թե այսօրվա:

Բնականաբար, դաշնակից ուժերն արդեն փետրվարին ամրագրել էին Հայաստանի՝ Վրաստանի եւ Ադրբեջանի հետ ունեցած սահմանաբաժանման սկզբունքը՝ ժամանակային առումով դա կապելով Վիլսոնի՝ երեք ամսվա ընթացքում կայացնելիք Իրավարար վճռի հետ: Արդեն ապրիլին Դաշնակիցները Սան-Ռեմոյում քննարկում են Հայաստանի ճակատագիրը, ապրիլի 26-ին Ֆրանսիան, Իտալիան եւ Մեծ Բրիտանիան միացյալ նոտայով դիմում են Միացյալ Նահանգներին երկու խնդրանքով. առաջին՝ ստանձնել Հայաստանի մանդատը, եւ երկրորդ՝ Իրավարար վճռով զեկուցել հայ-թուրքական սահմանաբաժանման հարցի շուրջ, այսինքն՝ սահմանագծումը կատարել նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի եւ Տրապիզոնի նահանգներում: Սակայն շատերին ավելի իրատեսական էր թվում Փոքր Հայաստանի գաղափարը, եւ, փաստորեն, 1919թ. դաշնակիցները ետ են կանգնում Մեծ Հայաստանի ստեղծման վիլսոնյան ծրագրից եւ ենթադրվելիք Միացյալ Հայաստանի տարածքի 60 տոկոսը հանձնում են Թուրքիային զուտ այն պատճառով, որ արդեն 1920թ., երբ դաշնակիցները սկսում են մանրակրկիտ զբաղվել այս հարցով, պարզ է դառնում, որ հայությունը չի կարող մեծամասնություն կազմել այդ տարածքում եւ Վիլսոնի բառերով ասած՝ «չի կարող վերահսկել այն»: Հիշեցնենք, որ դաշնակիցների հաշվարկներով՝ Հայաստանի ստեղծման պահին իրենց հատկացվող տարածքներում հայերը կարող էին կազմել բնակչության 52 տոկոսը, իսկ 20 տարվա ընթացքում նրանց թվաքանակը կարող էր հասնել մինչեւ 75 տոկոսի: Մանդատն էլ ենթադրում էր վերահսկողության, այսինքն՝ խնամակալության հարցը:

Ցավոք, 1920թ. հունիսի 1-ին Միացյալ Նահանգների Սենատը մերժում է Հայաստանի մանդատը ստանձնելու Վիլսոնի առաջարկը՝ ելնելով մի շարք ներքին եւ արտաքին պատճառներից, որոնցից առաջինը պայմանավորված էր Սենատում Վիլսոնի ունեցած փոքրամասնությամբ, իսկ երկրորդը՝ Մոնրոյի դոկտրինով, որը ամերիկյան շահերը սահմանափակում էր միայն արեւմտյան կիսագնդում: Գոյություն ուներ նաեւ զուտ գործնական մի խնդիր. արդեն 1920թ. մայիսն էր, եւ Ադրբեջանում արդեն իսկ հաստատվել էին խորհրդային կարգեր, ինչը նշանակում է, որ Կարմիր բանակը կանգնած էր Հայաստանի դարպասների մոտ, եւ, բնական է, որ Միացյալ Նահանգները չէր ցանկանա զինված բախման գնալ ժամանակի ամենամեծ եւ հզոր, շուրջ 5 միլիոն զինվոր ունեցող սովետական բանակի հետ հանուն ինչ-որ փոքրիկ Հայաստանի: Չնայած դրան՝ 1920թ. մայիսի 17-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը պաշտոնական գրությամբ հայտնում է իր համաձայնությունը հանդես գալու որպես իրավարար հայ-թուրքական սահմանաբաժանման գործում:

Գոյություն ունի ուշագրավ եւ կարեւոր մի հանգամանք եւս. այն, որ արդեն 1920թ. մայիսի 11-ին թուրքական ղեկավարությանն է ներկայացվում Սեւրի պայմանագրի նախագիծը, որն, ի դեպ, արժանանում է վերջինիս հավանությանը: Այսպիսով, չի կարելի միանշանակ պնդել, թե օսմանյան ղեկավարությունը չի վավերացրել Սեւրի պայմանագիրը, քանզի մինչեւ այն ստորագրելը, այսինքն՝ մինչեւ օգոստոսի 10-ը, արդեն հունիսի 22-ին գումարվել էր օսմանյան կառավարության ընդլայնված նիստ, որտեղ կառավարությունը՝ սուլթանի գլխավորությամբ, իր համաձայնությունն ու հավանությունն էր տվել Սեւրի պայամանգրի կետերին: Հարց է ծագում՝ ինչո՞ւ պայմանագրի կնքումից՝ օգոստոսի 20-ից հետո հարցը մտնում է անմիջապես վերջնական՝ կատարման փուլ՝ առանց վավերացման: Բանն այն է, որ Սեւրի պայմանագիրը պարտադիր դառնալու համար, ըստ էության, վավերացման կարիք չուներ, եւ առավել քան անիմաստ է հետեւել սովետական ու թուրքական քարոզչությանն առ այն, որ պայմանագիրը չէր կարող ուժի մեջ մտնել, քանզի չէր

վավերացվել: Մյուս կողմից՝ Սեւրի պայմանագրի նախաբանում ասվում է, որ այն կնքված է, այսպես կոչված, «բարձր պայմանավորվող կողմերի միջեւ», ինչը միանշանակ է եւ Վիեննայի կոնվենցիայի առաջին մասի երկրորդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ «պայմանավորվող կողմերի միջեւ կնքված բոլոր պայմանագրերը պարտադիր են կատարման համար՝ դրանց ստորագրման պահից»: Տվյալ պարագայում ռատիֆիկացիան՝ վավերացումը, զուտ ներքին գործընթաց է, իսկ նման երեւույթ, ինչպես տեսնում եք, առկա է Թուրքիայի պարագայում: Շատերը վավերացումը շփոթում են խորհրդարանական համաձայնության հետ, մինչդեռ այն պետության ղեկավարի կողմից արված համաձայնությունն է, ինչպես օրինակ՝ մեր երկրում, որտեղ պայմանագրերը խորհրդարանի կողմից ոչ թե վավերացվում, այլ հավանության են արժանանում, իսկ վավերացումը կատարվում է արդեն իսկ նախագահի՝ այսինքն՝ պետության ղեկավարի կողմից՝ տվյալ պետության անունից եւ կնիքով: Իհարկե, շատ երկրներում առանց խորհրդարանի հավանության նախագահն իրավունք չունի վավերացնելու այս կամ այն միջազգային փաստաթուղթը, ինչպես օրինակ՝ Միացյալ Նահանգներում, որտեղ անհրաժեշտ է Սենատի 2/3-ի համաձայնությունը:

Ինչ վերաբերում է Սեւրի պայմանագրին, ապա վերջինս, անկախ այն բանից՝ մտե՞լ է ուժի մեջ, թե՞ ոչ, պարտադիր է կատարման համար: Սա է պատճառը, որ երբ Վուդրո Վիլսոնն իր դեսպան Հայզընն Բարասից խնդրում է ստորագրված փաստաթուղթը, ստանում է արդեն Սեւրի պայամանգրի՝ «պայմանավորվող բարձր կողմերի միջեւ» ստորագրված տարբերակը, ինչը միանգամայն բավարար հիմք էր հանդիսանում Իրավարար վճռի կայացման համար, եւ ամերիկյան նախագահն այսուհետ կարիք չուներ սպասելու վավերացման: Այժմ համառոտ անդրադառնանք իրավավար միջնորդի դերում Վիլսոնի ընտրության մի քանի պատճառների: Նախ՝ Միացյալ Նահանգներն այդ ժամանակ, ըստ էության, Օսմանյան կայսրությանը պատերազմ չհայտարարած միակ մեծ երկիրն էր, եւ հետեւաբար, որպես չեզոք երկիր, կարող էր Իրավարար վճիռ կայացնել: Վիլսոնի ընտրության մյուս պատճառը նրա անձն էր՝ որպես իրավաբան, եւ տեղին կլինի ասել, որ նա, ըստ էության, եղել է Ամերիկայի մեծագույն իրավաբաններից մեկը: Բացի այդ, 1915թ. հոկտեմբերից սկսած՝ նա ծավալել էր հայ որբերին օգնելու գործունեություն, ինչպես օրինակ՝ այդ առիթով տպագրված ամերիկյան նամականիշների վաճառքի հասույթի տնօրինումը՝ հոգալու համար վերջիններիս կարիքները, Հայաստանի տարածքում մի շարք ամերիկյան որբանոցների հիմնումը, որոնք իրենց գոյությունը պահպանեցին մինչեւ 1929թ. եւ այլն: Նշենք, որ մեծապես այս միջոցառումների շնորհիվ հնարավոր դարձավ շուրջ 130 հազար որբերի փրկել վերահաս մահից:

Այսպիսով՝ ի՞նչ նշանակություն ուներ այդ Իրավարար վճիռը մեզ համար: Նկատենք, որ այն կոչված էր որոշելու միայն մեկ՝ հայ-թուրքական սահմանի հարցը, ինչը եւ արվեց՝ Հայաստանի կազմում ներառելով Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների զգալի մասը եւ Տրապիզոնի նահանգի մի մասը՝ ապահովելով Հայաստանի ելքը դեպի ծով՝ ընդհանուր առմամբ մոտավորապես 105 հազար քառակուսի կմ տարածք՝ բնականաբար, առանց Կարսի մարզի, որն այսպես թե այնպես, արդեն Հայաստանի մաս էր: Վճռի համաձայն՝ նախատեսվում էր 50 կիլոմետրանոց շերտի ապառազմականացում սահմանի ողջ երկայնքով: Իրավարար վճիռը կայացվում է 1920թ. նոյեմբերի 22-ին: Քանի որ նշյալ վճիռը կատարման համար պարտադիր փաստաթուղթ էր՝ անբեկանելի եւ անշրջելի, ամերիկացիները տպագրում են նաեւ աշխատանքային քարտեզները, թվով 19, որոնց վրա էլ մանրակրկիտորեն նշում են սահմանազատումը՝ ապահովելու համար տարածաշրջան գործուղվելիք սահմանազատումն իրականացնող հանձնաժողովի հետագա աշխատանքները: Նշենք, որ անօրինական է կատարել ցանկացած սահմանանշում՝ առանց սահմանազատումն ապահովող պայմանագրի, կամ էլ հիմնվելով ոչ թե պայմանագրի,

այլ քարտեզների վրա, քանզի միջազգային իրավունքը հստակ ամրագրում է, որ հակասությունների առաջացման պարագայում նախապատվությունը պետք է տալ պայմանագրին եւ ոչ թե քարտեզներին:

Այսպիսով՝ ինչպես տեսանք, Սեւրի պայմանագրի վավերացման ժամկետների հետ որեւէ կապ չունեցող վիլսոնյան Իրավարար վճիռը ուժի մեջ է մտնում դրա հրապարակումից անմիջապես հետո՝ ենթակա լինելով կատարման նոյեմբերի 22-ին հաջորդող 3 ամիսների ընթացքում: Սակայն, ցավոք, վճռի կայացումից շատ չանցած՝ Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր կամ միջազգային լեզվով ասած՝ 15-րդ Կարմիր բանակը օկուպացնում է Հայաստանի տարածքը: Հետաքրքիր է, որ Հայաստանի խորհրդայնացմանը միշտ նայում են կա՛մ պատմական, կա՛մ քաղաքական տեսանկյուններից՝ անտեսելով իրավաբանական կողմը: Բանն այն է, որ Հայաստանի խորհրդայնացումը միանգամայն իրավական ակտ էր, երբ արդեն իսկ գոյություն ունեցող միջազգայնորեն ճանաչված պետությունը փաստացիորեն օկուպացվում, բռնակցվում է մեկ այլ պետության: Այսինքն՝ Հայաստանի խորհրդայնացմանը միջազգային իրավունքի տեսանկյունից կարող է տրվել միայն մեկ գնահատական կամ բնորոշում, այն է՝ օկուպացիա, այսինքն՝ նախ բռնազավթում՝ օկուպացիա, ապա բռնակցում՝ անեքսիա: Ուշագրավ է նաեւ, որ նշյալ բռնազավթման-բռնակցման արդյունքում Խորհրդային Միության ներվարչական սահմանների գծումն անգամ անօրինական էր, քանզի այն հիմնված էր ոչ թե պետության կամ ազգերի կամարտահայտության, այլ միջազգային հանցագործության վրա:

Ինչեւէ, վիլսոնյան բուն Իրավարար վճիռը 89 էջանոց մի փաստաթուղթ էր՝ ավելացրած մոտ 150 էջանոց հավելվածներ եւ աշխատանքային քարտեզներ: Նկատենք, որ փաստաթուղթն ամբողջությամբ երբեւէ չի տպագրվել, բացառությամբ 7-րդ գլխի:

Այսպիսով՝ Հայաստանի սահմանային հարցերը կարգավորող հայտնի Իրավարար վճիռը ստորագրել են Վ.Վիլսոնը եւ ԱՄՆ պետքարտուղարը՝ այն կնքելով ԱՄՆ պետական կնիքով, ինչը նշանակում է, որ այդ վճիռը համարվում է կատարման համար պարտադիր փաստաթուղթ Միացյալ Նահանգների համար, քանի դեռ վերջինս գոյություն ունի: Այսինքն՝ սա ԱՄՆ միջազգային պարտավորությունն է՝ որպես հայերի դաշնակից, որոնք հաշտության վեհաժողովի ժամանակ համաձայնեցին բավարարվել պատմական Հայաստանի տարածքի 40 տոկոսով, թեեւ այդ վճիռն ի վնաս հայերի էր: Այսինքն՝ դաշնակից տերությունները մեզ որեւէ լավություն կամ զիջում չեն արել: 1926թ. ԱՄՆ պետքարտուղարության իրավաբանը եւս պաշտպանել է վերոնշյալ տեսակետը՝ վճիռը համարելով որպես ԱՄՆ ստանձնած միջազգային պարտավորություն: Հետագայում, մասամբ հաշվի առնելով նաեւ այս հանգամանքը, ԱՄՆ Սենատն այդպես էլ չի ճանաչում Թուրքիայի սահմանները՝ պատճառաբանելով, որ քանի դեռ թուրքական կողմը մերժում է բավարարել Վիլսոնի Իրավարար վճռի պահանջները, իրենք չեն կարող ճանաչել այդ երկրի սահմանները: Այսինքն՝ այսօր գոյություն չունի թուրքական սահմանի ճանաչում ԱՄՆ-ի կողմից, քանզի Իրավարար վճիռը, կնքված լինելով պետական մեծ կնիքով, կրում էր ԱՄՆ ներպետական օրենսդրական ակտի բնույթ՝ բխելով Սահմանադրության դրույթներից:

Վերադառնալով Սեւրի պայմանագրին՝ նկատենք ուշադրության արժանի 80-րդ եւ 90-րդ հոդվածները, որոնցում հստակորեն ասվում էր, որ Իրավարար վճռի անհապաղ կատարումը կախում չունի պայմանագրի վավերացման կամ կատարման ժամկետների հետ: Այսինքն՝ Սեւրի պայմանագիրը կարող է նաեւ ուժի մեջ չմտնել, մինչդեռ Իրավարար վճիռը ուժի մեջ է եւ ենթակա է կատարման ընդունման օրվանից, ինչն էլ նախապես ընդունել են Սեւրի պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները:

Այսինքն՝ տերությունները, նախապես իմանալով Թուրքիայի անհավատարմությունը իր ստորագրած միջազգային պայմանագրին, գործի էին դրել Թուրքիայի վրա կրկնակի ազդելու եղանակը՝ ամրագրված պայմանագրի 80-րդ հոդվածով, ըստ որի Թուրքիան հրաժարվում է նշյալ տարածքի նկատմամբ իր բոլոր իրավունքից: Մյուս կողմից՝ կայացված Իրավարար վճիռն անբեկանելի էր նաեւ Հաագայի 1895 եւ 1907 թվականների միջազգային կոնվենցիաների համապատասխան հոդվածների համաձայն: Այսպիսով՝ ուշագրավ եւ կարեւոր է այն, որ հայ-թուրքական սահմանների հարցը լուծվել է ոչ թե պայմանագրով, այլ Իրավարար վճռով, իսկ վերջինս, փոփոխման ենթակա չլինելով, ազատում էր Հայաստանին՝ իրեն պարտադրվելիք այլ կից պայմանագրերը ստորագրելու անհրաժեշտությունից: Հետաքրքիր է նաեւ այն, որ Սեւրի պայմանագիրը ստորագրած թվով 18 երկրները միանգամայն պատասխանատվությամբ ճանաչում էին Հայաստանի իրավունքները, իսկ եթե հաշվի առնենք նաեւ այն հանգամանքը, որ Միացյալ Թագավորություն կամ Ֆրանսիայի երրորդ Հանրապետություն ասելով միաժամանակ նկատի ունենք նաեւ վերջիններիս ենթակայության կամ հովանավորության՝ պրոտեկտորատի տակ գտնվող մյուս երկրները, կտեսնենք, որ աշխարհի ավելի քան 70 երկիր ժամանակին ճանաչել է հայերի իրավունքներն իրենց պատմական տարածքների նկատմամբ: Նկատեք նաեւ, որ հետագայում էլ Ազգերի լիգայի կամ որեւէ վեհաժողովի քարտեզներում հայ-թուրքական սահմանն ամրագրված է եղել ըստ վիլսոնյան վճռի: Եվ փաստորեն այսօր հայերը պահանջում են Թուրքիայի կողմից ոտնահարված, միջազգայնորեն ճանաչված իրենց իրավունքների վերականգնում, իսկ արդեն 1991թ. վերանկախացած Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ոչ թե Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, այլ Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդը, եւ, հետեւաբար, ժառանգել է վերջինիս սահմաններն ու դրանց հետ կապված իրավարար ակտերը: Այսինքն՝ ժամանակին որպես միջազգային իրավունքի սուբյեկտ գոյություն ունեցող Հայաստանի արեւելյան մասը օկուպացված է եղել Ռուսաստանի, իսկ արեւմտյանը՝ Թուրքիայի կողմից: Այդ իսկ պատճառով այսօր պարզապես անհեթեթություն է բանակցություններ վարել ինչ-որ վարչական միավորների շուրջ: Մենք պետք է վերադառնանք այն բոլոր միջազգային փաստաթղթերին, որոնք նախորդել էին Հայաստանի օկուպացիային խորհրդային ուժերի կողմից:

Որպես վերջաբան՝ կցանկանայի հիշել Վ.Վիլսոնի տուն-թանգարանում գտնվող Հովսեփ Հուշմանի կտավը, որի վրա պատկերված է երիտասարդ աղջիկ՝ ձեռքին անթառամ ծաղիկը բռնած: Վիլսոնի համոզմամբ՝ այդ աղջիկը Հայաստանն է, որը հետագայում պիտի մեծանա, հասուն կին դառնա, իսկ անթառամ ծաղիկը անբեկանելի Իրավարար վճիռն է, որից մի օր Հայաստանը պիտի կարողանա օգտվել եւ օգտագործել:

Հարցուպատասխան

Ստեփան Սաֆարյան
ԱԺ պատգամավոր, «Ժառանգություն» խմբակցության քարտուղար

Ձեր ելույթում նշեցիք, որ Թուրքիան չի ճանաչվել ԱՄՆ-ի կողմից, եւ, փաստորեն, հարցը մնում է առկախ: Արդյոք այսօր ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի տարածքի ճանաչման որեւէ պայմանագիր գոյություն ունի՞, թե՞ ոչ:
Հաջորդ հարցը վերաբերում է Վրաստան-Հայաստան դեմարկացիոն գործընթացին: Չեմ կարծում, որ վրացական կողմը տեղյակ չէ սահմանաբաժանման երեք փուլերին: Արդյո՞ք որեւէ քաղաքական շարժառիթ չկա նրանց այս քայլերում:
Եվ իմ վերջին հարցն առնչվում է արդեն իսկ Սեւրի պայմանագրին. արդյոք Իրավարար վճիռը բխո՞ւմ էր դրանից, թե՞ ոչ:

Արա Պապյան

Իսկապես, մինչ այսօր գոյություն չունի ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի ճանաչման որեւէ այլ փաստաթուղթ, քան այն, որ նշեցի խոսքիս ընթացքում:
Պետական սահմանները ճանաչվում են այդ մասին համապատասխան պայմանագրով, ինչը Թուրքիայի եւ ԱՄՆ-ի դեպքում չի արվել, իսկ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը եւ այսօրինակ այլ գործընթացները սահմանների ճանաչման գործում դեռ ոչինչ չեն նշանակում ու չեն փոխում: Ընդ որում՝ սահմանը ճանաչված չէ նաեւ ՀՀ-ի կողմից: Այդ է պատճառը, որ այսօր տերությունները Հայաստանի առջեւ այն ճանաչելու պայման են դնում: Այս դեպքում ԱՄՆ-ը հնարավորություն կստանա Սենատում անցկացնել հրապարակային օրինագիծ եւ ճանաչել Թուրքիայի սահմանները, քանզի Իրավարար վճռից օգտվող հիմնական շահառու կողմը՝ Հայաստանը, արդեն իսկ այն ճանաչած կլինի: Սակայն այստեղ եւս ի հայտ է գալիս իրավական մի հանգամանք, ըստ որի մենք չենք կարող ճանաչել այդ սահմանը, քանի որ այն չի որոշվել համապատասխան երկկողմ, միջպետական՝ հայ-թուրքական պայմանագրով: Մյուս կողմից՝ ցանկացած միջազգային պայմանագիր կարող է վերատեսության ենթարկվել այն ստորագրած բոլոր երկրների համաձայնությամբ: Այսինքն՝ Սեւրի պայմանագիրը կնքվել է Թուրքիայի եւ մի շարք պետությունների միջեւ, այդ թվում՝ Հայաստանի: Ու թեեւ Իրավարար վճիռն, այո, անբեկանելի է, բայց Հայաստանը կարող է հրաժարվել այդ տարածքներից՝ դրանց տնօրինման տիտղոսը տալով Թուրքիային եւ ճանաչելով նոր սահմանները:

Ինչ վերաբերում է նախկին խորհրդային հանրապետությունների անկախացմանը, նշենք, որ միջազգային իրավունքի տեսանկյունից նրանք մտնում են ճանաչման ենթակա երկրների տարբեր խմբերի մեջ, համաձայն որի՝ իբրեւ առանձին պետական միավորներ, ունեն ինքնորոշման իրավունք՝ ամրագրված միջազգային իրավունքի նորմերով, իսկ որպես միեւնույն Միության ներվարչական միավորներ՝ հավասար են սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Այս տեսանկյունից խոսելով քրդերի ինքնորոշման ցանկությունից, նկատենք, որ դա մի կողմից կարող է որակվել որպես միջազգային իրավունքի ոտնահարում, խախտում վիլսոնյան Հայաստանի տարածքում, իսկ մյուս կողմից կարող է հանդիսանալ բնական քայլ կամ արարք նույն միջազգային իրավունքի՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի տեսանկյունից: Վիլսոնի Իրավարար վճռով հայ-թուրքական սահմանազատումը հյուսիսային կողմում Հայաստանի սահմանն էր ստեղծվելիք Քյուրդիստանի հետ: Այսինքն՝ մենք այսպես թե այնպես ներքաշվելու ենք Քրդստանի անկախացման գործընթացի մեջ, քանի որ քրդերին պետություն շնորհելու մասին միակ փաստաթուղթը Սեւրի պայմանագիրն է, մասնավորապես՝ դրա 62-րդ հոդվածը, իսկ Վիլսոնի Իրավարար վճռով Քրդստանը հյուսիսում սահմանակից է Հայաստանին:

Ազգերի ինքնորոշման, պետությունների անկախացման, այդ անկախացման ճանաչման կամ սահմանազատման հարցերը քննելով միջազգային իրավական հարթության շրջանակներում՝ նկատենք, որ այստեղ կարեւոր եւ վճռորոշ, եթե չասենք՝ ճակատագրական է պետությունների ոչ միայն գործունեությունը, այլեւ անգործությունը այս կամ այն հարցի շուրջ: Այսինքն, եթե այսօր տասնվեցամյա անկախ Հայաստանի Հանրապետությունը մեկ անգամ իսկ չի բարձրաձայնում Թուրքիայի կողմից օկուպացված իր տարածքների մասին, ապա վաղը, երբ Քրդստանն անկախանա այդ նույն տարածքներում, Հայաստանն ինքն իր այսօրվա անգործությամբ հովանավորած կլինի այդ գործընթացը: Այսինքն՝ մենք մեր լռությամբ կկորցնենք մեր իրավունքները, կամ լավագույն դեպքում, դրանք շատ կբարդանան:

Բացի այդ, Թուրքիայի կողմից Հայաստանի սահմանների փակումն, ըստ էության, անօրինական է (օրինական կլիներ պայմանագրի դեպքում), եւ Հայաստանն իրավունք ունի պահանջելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից համապատասխան քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ՝ ընդհուպ մինչեւ ռազմական գործողություններ Թուրքիայի դեմ, ինչն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 34-35-րդ հոդվածներում:

Այսպիսով՝ ժամանակակից մարտահրավերները պահանջում են գործնական, քաղաքական լծակների կիրառում է եւ ոչ թե զուտ ցանկության արտահայտում: Իսկ Հայաստանն այսօր ունի այդ լծակները: Հայաստանն ի զորու չէ իր անվտանգության խնդիրները լուծել ռազմական ուժով, բայց նա դա կարող է անել դիվանագիտական դաշտում, որն ավելի էժան է, անվտանգ ու խաղաղ: Այսպիսով՝ խնդիրը ոչ թե տարածքային ձեռքբերումներն են, այլ մեր իրավունքների հաստատումը միջազգային իրավունքով մեզ հատկացված տարածքում: Մյուս կողմից մենք պետք է զերծ մնանք միջազգային իրավունքն ըստ մեր նպատակահարմարության օգտագործելուց ու մեկնաբանելուց: